

Մ Ա Ս Ի Ս

Ի Ր Ե Գ Ի Ր

ԱՐԳԱՅԻՆ, ԲԵՂԵԲԵԿԱՆ, ՏՆՏԵՍԵԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆ

Տարեկան գինն է 100 զուգուշ :
Վեցամսեայ " " 55 " "
Մէկ Ժամուցումը տուին 40 փարայ է :
Երկու " մէկ ամիսը " 30 " "
Չորս " " " 20 " "
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամիսը 1 ֆն և
10 ֆն կը սկսին :

Դուրս ելլալից լրագրիւններուն ծախսուն
ծախսը առնուլն վրայ է :
Լրագրից վերաբերեալ նամակ կամ որ և
իցէ գրութիւն , խմբագրին սխալ ուղ-
ղուի . և ասոնց ծախսուն ծախսը իրը
կողմն վրայ է :

ԲՈՎԱՆԻՆԻՍՏԻԿԱՆԻՍՏԻՆ

ԱՋԳԱՅԻՆ

Դամակ ինչ - Վառնայի և Սեբաստիայ մէջ ուսում
նախնական ընկերութիւններ : - Սամաթիոյ հրդ.
կիցէրց կարեկից եղող բարեկարգ ոտարագրու-
թեան ցուցակ :

ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնագրութիւնը - Ստամբուլ վրայից Բ.
Դրան յայտարարութիւնը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՅԻՆ : Երեսուցի իշխանին ծանադարհորդութեան
շարունակութիւնը և Լինի մէջ խօսած ծառը :
- Իտալիայի մերենայ :

ԵՅՅԱՆ : Ուշիկի ինչքնի գուքին յաղարկաւորու-
թեանը վրայ որոշում :

ԵՍՍԻՆ : Բէշթի մէջ եղած զորաց բաղմունքին ու
հոս այս միջոցին գտնուող երեւելի անձինք :

ԻՏԱԿԱՆ : Թուրքիայի մէջ կրօնական խտրութիւն մը :
ԵՍԵՐԻՆ : Բաւար կղզւոյ մէջ մեծ շարժ :

ԻՍԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆ

Գրութիւն մասնան մը :

ԱՐԳԱՅԻՆ

Հետեւեալ նամակը աղագետք ան-
ձին մը մեղեցեղաբարեւ է :

« Այս օրերս երկու գիրք անցան մեր
ձեռքը . մէկը խաղերէն , և միւսը՝ հա-
յերէն : Խաղերէն գիրքը՝ Հոմերոսի
գայատուններն են , և զգրողական (քո-
լէճցի) ըստած մէկ քանի վարդապետի
գործ է , ըստ Իլլիոս եպիկոսոսին գաղ-
ղիացւոյ : Այս իտալերէն գիրքը ալ որ
կարդայ , մը կողմէն և կարդայ , և քանի
հեղ ալ կարդայ , միշտ մի և նոյն բանը
կը գտնայ մէջը . այսինքն թէ՛ « հերձ-
ուած , մարտաւ և հերետիկոս են հա-
յերը . ուստի Վենետիկի միթիար-
եանք ալ ասանկ հայոց հետ հաղորդ-
գակցութիւն ընկնուն համար , հերձ-
ուած , մարտաւ և հերետիկոս են , ոչ
աւելի և ոչ պակաս » : Ահա աս է ի-
տալերէն նորատիպ գիրքին ուղ և ծու-
ծը :

Գրան հայերէն գիրքին : Այս հայե-
րէն գիրքն ալ Վենետիկի վանքին մէջ
տպուած և Վենետիկի միթիարեան
վարդապետաց գործն է : Այս գիրքն
ալ կարդայողը ուրիշ բան չի գտնար
մէջը , եթէ ոչ այս իմաստը , թէ « հա-
յերը թէպէտ հերձուած , մարտաւ և
հերետիկոս են , բայց Վենետիկի միթի-
թարեանք ոչ հերձուած են , ոչ մարտ-
եալ և ոչ իսկ հերետիկոս , ինչու որ
հաղորդակցութիւն չունին հայոց հետ » :
Ահա հայերէն նորատիպ գիրքին ալ
ծուծը :

Այս երկու գիրքին բուն իսկ ի-
մաստները համառօտապէս հասկնե-
լէն ետեւ , հիմա հոս մէկ երկու խոր
հրդածութիւններ ընկնի կարծաւօս :

Քօլէճցիները ինչ որ կ'ըսէին յա-
ռաջն , հիմա ալ նոյնը ըսեր են առանց
խաղի և առանց երկիւղածութեան .
այսինքն անոնք կ'ըսէին , թէ՛ « հայ աղ-
գը՝ հերձուած , մարտաւ և հերետի-
կոս է . արդ՝ հիմա ալ նոյն չարախօ-
սութիւնները ըրեր են իրենց անձու-
ն » : Կոթին մէջ : Բաւել կ'ուզենք , թէ

քօլէճցիք առաջ կը բամբասէին զաղգը ,
հիմա ալ բամբասեր են . առաջ կը չա-
րախօսէին , հիմա ալ չարախօսեր են .
առաջ կը հայհոյէին , հիմա ալ հայհո-
յեր են , թէպէտ իրենց աս հինա-
ուրց անդամութիւնը նորէն յայտ-
նելու առիթ մըն ալ չունէին : Սարգիս
մէկ գէշութիւն մը սորվէին ետեւ , նոյն
գէշութիւնը ամեն անգամ կ'ընէ , ա-
ռիթ գրգռման ունենայ կամ չունենայ :
Արդ՝ ամեն մարդ գիտէ , որ քօլէճցիներ
ըլ սորված և վարժած են աղգատեցուէ ,
զրպարտութե և կերպ կերպ քամահ-
րելի վատութեան . ուստի ահա հիմա
ալ իրենց սորվածին և շատ ատեն ան-
խիղճ գործածածին նորէն գործածեր
են : Երաններուն վրայ զայրանալ չի վայ-
լեր , հայալ ցաւել կ'ուզէ , որ ասանկ ան-
բուժելի աստորով վարակեր են , ու
չեն գիտեր ինչ կ'ընեն : Մէկ կողմէն
աղգին կրօնը կը պարտաւեն , և միւս
կողմէն ալ աղգին աղգութիւնը ջնջել
կը ջանան , ուրանալով բացարձակ և
յայտնապէս աղգին լեզուն և հայու-
թիւնը , ինչպէս որ անցեալներն ալ ի-
րենց աշակերտներէն մէկ քանին ուրա-
ցան հայութիւնը արքունի նախարարի
մը քով , և արժանապէս յանդիման-
ութեան : Երանները ինչ պատասխան
պիտի տան (ստուծոյ :

Հայ աղգը որչափ ցաւեցաւ և կը
ցաւի քօլէճցւոյ և անոնց համարիտ
աշակերտաց վրայ , այնչափ ալ և գու-
ցէ առաւել եւս պիտի ցաւի Վենե-
տիկի Վիթիարեանց վրայ , տեսնալով ,
որ ասոնք ալ սկսեր են արձակ համար-
ձակ արհամարհել և անգունել զհայոց ,
հերձուած , մարտաւ և հերետիկոս
անուն տալով հայերէն նորատիպ գիր-
քին մէջ և պապին խրկուած ջատա-
գութութեան մէջ : Վենետիկի միթի-
թարեանց թիչ եղաւ . ինչու բերանին
փոխեցին . ասոնք մինչեւ հիմա պաշտ-
պան և ճշմարիտ բարեկամ հայոց կը
ձեւանային . հիմա ինչ պատճառաւ
աղգին փոս հասցունել կ'ուզեն . քան-
զի հերձուած կամ մարտաւ կամ հե-
րետիկոս անուն տալով հայոց , անոնց
պատիւը կտրելու ջանալ Եւրոպայի
բոլոր աղգաց առջեւ , ասիկա ի վնասել
է աղգին , կամ փնասել ուղղել է : Մի
թէ ինքզինքնին արգարացունենք ը-
սելով , ասանկ յալ և յահեակ անինայ
և անգուշաբար զարեւելն էին : Մէղք ,
հաղոր մեղք . չէին կարծեր , և չէինք
յուսար , որ Վենետիկի Վիթիարեան-
քն ալ հայ աղգին ընդհանրութեան
կողմանէ կամաւոր և գիտամբ փոս
մը կամ գոյն ինչ շարք մը չի տեսնա-
լով , աղգին փոս հասցունելու ելլեն :
Վնաս կամ չարքիք սլ տեսած ըլլային ,
իրենք յայտ աստիճան ատելութիւն
ցուցնելու չէին , հերետիկոս և այլ
այսպիսի վատ անուն ուղղով աղգին , ու
բովհետեւ իրենք հայագէտ ըլլալով՝ ա-
սանկ բառերուն ուժը և գիտեն :

Ինչ և իցէ , աղգը նաբուէր է ե-
ղեր . միթիարեանները բարեկամ կը
ձանձար , բարեկամ չեան : Բայց այս
օգուտը ըսաւ , որ հիմա գիտցաւ իր
խաբուիլը : Ամեն մէկ նորդ , ըստ ու-
րում մարդ , կը խաբուէ և կը սխալի

աս աշխարհքիս վրայ . ուրեմն աղգն
ալ ասանկ սխալական մարդերէ բաղ-
կացաւ : Երկրորդութիւն մը ըլլալուն հա-
մար , կրնայ խաբուիլ , ինչպէս որ խաբ-
ուեցաւ : Եւ թէպէտ խաբուեցաւ ,
բայց գիտցաւ ու հասկցաւ , թէ ու
իցէ պապագաւան վարդապետ՝ ճշմա-
րիտ և անձնանուէր բարեկամ աղգին
չէ եղեր և չի պիտի կրնայ ըլլալ :

Իտալերէն և հայերէն աս երկու
կտոր գիրքին մէջ գեղ շատ կան ասանկ
անվայել զրպոյններ , սուտ զրպարտու-
թիւններ , անհիմն և վնասակար չա-
րախօսութիւններ , քաղաքավարութե
գէժ մ ձեռնարկութիւններ մի քան զմի
ծանր և սիրտ ծախող : Բայց մենք ու-
րովհետեւ վիճաբանութիւն ընելու
միտք չունինք , ուստի զանոնք ամենը
կը ծալենք կը պահենք , մինչեւ ժամա-
նակը և պարագաները փնտռել տան
յոչ կանայ մերոյ :

Իսկ հիմա այսչափ միայն կ'ըսենք ,
թէ՛ հայ եկեղեցին ոչ հերետիկոս է ե-
ղեր մինչեւ հիմա , ոչ մարտաւ և ոչ
իսկ հերձուածող : Հայ եկեղեցին սք
և առաքելական էր առաջ , հիմա ալ
սուրբ և առաքելական է : Արդ՝ հայ
աղգը նոյն սուրբ եկեղեցւոյ զաւակն
է , ուստի կատարեալ բրտասնայ է ,
և ոչ թէ հերետիկոս կամ մարտաւ
կամ հերձուած : Այս ալ ըսենք ի վեր-
ջոյ , թէ մեք արհամարհանք կը հեր-
քեմք (քօլէճցի կ'ընենք) այդ գէշ
բառեր և անհիմն զրպարտութիւննե-
րը , և եթէ պէտք ըլլայ՝ ուրիշ այլ և
այլ լեզուներով ալ կը հասկըցունենք
աս ամն ըսածինս :

ԻՄԱՍՈՐԿԱՆԻՍՏԻՆ

Վառնայէն եկած գիրքը՝ Շոււմ
նուի որդնտիր առաջնորդ Երթանա-
պատի Սարաֆեան Վարդի վարդա-
պետին Վառնայի մէջ ըրած բարեկար-
գութիւնները մեղի կը ծանուցանեն :

Իսկեւ և աղգաւոր անձինքներէ
ընկերութիւն մը կազմելով , զպատասնայ
և եկեղեցւոյ խնամատարութեան հո-
գը անոնց յանձնէր է , որ ուստի են
մինչեւ տաւ և վեց ամիս՝ համարիտ
հուր . միտքանութեամբ աշխատելու
եկեղեցւոյն պայծառութեանը և զրգ-
րատնց բարեկարգութեանը համար :

Վրդանց զպատասն մըն ալ շինե-
լու պիտի են , արդէն ունեցածին հին ,
նեղ ու անկանոն ըլլալով , և իրենց
զաւակնորուն կանոնաւոր կրթութիւն
տալու փափաքով բանիբուն վարժա-
պետն և վարժապետահինք գըտ-
նելու խախտին :

Իրենց նորնտիր հոգեւոր հօրը ի-
մաստուն խրատներուն հետեւելով ,
միտքանական սիրոյ քաղցրութիւններն
ու օգուտները վայելել սկսեր են և ա-
սոր համար յատկապէս շնորհակալուէ
գիրքեր կը խրկեն բարեխնամ Սրբազան
Վատրիարքին , որ այնպէս աղգաւոր ու
բարեխնամ առաջնորդ մը իրենց չը-
նորհէ :

Ասանկ հոգեւորականները իրաւամբ
աղգին խնամակարութիւններն են , ի-
րենց ստուածադիր սրբազան պաշտօ-
նին պարտաւորութիւնները ձանձուղ

հաւատարմաւորութեան են . սիրոյ ,
խաղաղութեան , շինութեան և լու-
սաւորութեան պաշտօնայ , որ ինքը
զինքնին բողոքովն ժողովուրդեան բարօ-
րութեանը նուիրելով , անոնց սրտին
մէջ երախտագիտութեան անջնջելի-
շատակներ կը թողուն :

Յիշեալ ընկերութեան գործակալ
անդամներն են :

Յովնանէս	աղա	մահաթիկ Կարապետեան
Հրիկ	"	Մարտիրոսեան
Սարգիս	"	Մովսէսեան
Գարիբէ	"	մահաթիկ Առաքելեան
Յէրոն	"	Անդրեասեան
Յովնանէս	"	մահաթիկ Ղուկասեան

Այս արգոյ արձինքը իրենց երկրին
աղգային բարեկարգութեանը և յա-
ռաջացմանը ջանալու և յանձն առած
առաքինական պաշտօններն անձնանու-
րութեամբ և յարատեւութեամբ գը-
լուիս հանելու համար հաստատուն
ուստ ըրած ըլլալով , իրենց անուան
պատիւը՝ բոլոր աղգին առջեւ ըրած
ուստներուն կատարմանը գրաւական
մը կրնայ համարուիլ :

Ուրիշ աղգաւորական ընկերութիւն
մըն ալ Սեբաստիայի մէջ հաստատուէր
է այս օրերս « Սեբաստիական ընկե-
րութիւն » անունով :

Այս ալ շարժառիթը՝ ուսումնա-
սիրական հոգւոյն արթնանալ է տեղ-
ւոյն հայ ժողովուրդեան մէջ քանի որ
Սեբաստիայի Վիճակին առաջնորդու-
թիւնը գերապատիւ Տ. Կարապետ ու-
սումնասէր սրբազան Արքեպիսկոպոսին
յանձնուեցաւ :

Երկու երեւելի անձինք՝ մեծարգոյ
Յովնանի և Մահաթիկ Գեորգի հարա-
զատք Օտապաշեան՝ աղգաւորաբար ի-
րենց ծախիւքը վարժարան մը շինելու
աղգին նուիրեր են :

Այս արեւմտախոհ անձանց շնորհա-
ւոր առատաձեռնութիւնը օրինակ և
գրգռ մը եղեր է տեղւոյն երեւելե-
եայը՝ միաբանելու , ընկերութիւն
կազմելու և ժողովուրդը յորդորելու ,
որ վերայիշեալ երկու աղգաւոր յարգե-
լիներուն գովելի նախանձը արգիւնաւ-
ւորեն , անոնց առաքինութեանը նը-
մանող ըլլան , զպրոցներ կանգնեն , բա-
րեկարգեն , ուսման և կրթութեան
բարեբերութեան իրենց զաւակներն ալ մաս-
նակից ընեն և ասանկով Սեբաստիա
քաղաքին առջի պայծառութեան համ-
բաւը վերականգնելու աշխատին :

Այս ընկերութեան ալ անգամ և
գործակալ եղեր են հետեւեալ արգոյ
անձինքը :

Բարունակ	աղա	Տէմիշեան , վերապետ
Գեորգ	"	Մեծ մարտեան , հոգաբարձ
Առաքել	"	"
Մանուկ	"	"
Ղալաբոյ	"	Պրոքիան , օգնական
Գրիգոր	"	Չապրան , խորհրդակա
Կարապետ	"	"
Պալկ	"	Տ. Պապան
Յօհան	"	Պրոքիան ,
Յակոբ	"	Բարունակեան
Խաչատուր	"	Բրուտեան
Պետրոս	"	Յօհաննէսեան
Մելքոն	"	Չապրան
Փայել	"	Պրոքիան

Այս ընկերութիւնները հիմնող բա-

կարծած ժամանակին, բրանին փնաս է: Ինչպէս ուրիշ (ընտել) ըստած դը-
րամը մէկ քանի կերպ է. դնենք թէ
մէկ կերպը 18 զուգուշ է և միւս կեր-
պը 20 զուգուշ է, և այս երկու կերպ
ալ ըստ իրան արծիւ թուան կոխ
ուած ըլլալով հասարակութիւնը չէ
կարող իմանալու անոնց արժէքները ու
շատ անգամ 18 զուգուշը 20 զուգուշ
ուրիշ կը տրուի. և անոնց մէջ գտնուած
խարդախեալ (գալի) դրամները չի
ձանձնալով, այն մասին եւս առաւել
փնաս կ'ընեն. վերջապէս այս առաւ-
տուրի մէջ եղած փնասը հասարակու-
թեան ու տեղութեան վերաբերեալ
ըլլալով, կրկին սաստիկ պատուէր եւ
դաւ և այս անգամի եղած պատուէրը
ուրիշ անգամներու պէս հասարակու-
թեան ձեռքէն աժան ստակ առնելու
մարդի չէ, միայն ամեն մարդու ձեռ-
քը գտնուած հին դրամները գնով
առնուելու ու լաւ տակ կոխուելու
ու հասարակութիւնը այս ըրած փնա-
սէն ազատելու մարդ է: Հիմա պէտք
է որ ամեն մարդ այս պատուէրին հա-
մեմատ տեսնէ իր դործը, և եթէ մէկը
համարձակի ընդդէմ գործելու, տե-
րութեան աչքին առջեւ շատ վատ
մարդ պիտի համարուի ու կանոնաւոր
կերպով պիտի դատաւարուի. ասա
այս անգամ կրկին և կրկին մտածմամբ
նորէն արժէք գրուեցաւ ու այս յայ-
տարարութեամբ ամեն կողմ ջրուե-
ցաւ: Գուրբի երկիրները ասիէ ա-
ռաջ միայն դրամաւորներ կային ըս-
տակներն անոնց տանելու համար. բայց
այս անգամ հասարակութեան դիւ-
րութիւնը ըլլալու համար տեղութեան
գտնաձին կողմէն ամեն երկիր եղած ուն-
տակներն որ տարուէ իսկայն լաւ դը-
րամով կը փոխեն և այս մասին համար
ամեն կողմ հրովարտակ խրկուած է,
կարգադրուած օրէն մինչեւ տասը օր
ժամանակ ստալով, որ ուր որ ձեռքը այս
դրամներէն ունի, տանի և մարդը ըս-
տակով փոխէ. և որոնք որ չեն տանիր
ու կ'աշխատին որ առեւտուրի մէջ
քչէն, բռնուած ժամանակը տուողը
և առնողը միասին պիտի պատժուին.
և դուրսի քաղաքները կամ տարեկան
պարտուէ համար և կամ փոխուելու
համար տրուած հին դրամները նոր
տրուած արժէքներուն նայելով պիտի
առնուին և իսկայն լաւ դրամ պիտի
տրուի ու առնուած հին դրամները
տեղութեան գտնաձին պիտի խրկուին.
և թէ որ մէկը միւսին առնելը ունե-
ւայ և խնդրած ժամանակը հին դրամ
տալու աշխատի ու լաւ դրամով պարտ-
քը չի տայ նէ, առնելիքին տէրը իս-
կայն դատաւորին իմաց տայ, որ իր
առնելիքը լաւ ստակով առնել տալէն
ետքը միւսը պիտի պատժուի: Ինչ-
հակառակն եթէ առնելիքին տէրը դա-
տաւորին չիմացուց ու ես ալ ուրիշին
կը քչեմ ըսելով առաւ նէ, բռնուած
առնելը ինքն ալ տուողին հետ պիտի
գատաւարուի. և այսպէս ստակով
մէկը բռնուած ժամանակը ուսկից ա-
ռաւ ըլլալը պիտի հարցուի և այսպէս
հարցաբնութեամբ մէջէն քանի հոգի
որ ելլէ, առաջինէն մինչեւ վերջինը
պիտի պատժուի: Այս մասին ոչ մեծ
և ոչ փոքր և ամենեւին մէկ բան մը
պիտի չի նայուի, ամենը միօրինակ ա-
ռանց կողմնադաշտութե պիտի պատժ-
ուին. և թէ որ այս յայտնաբերող տեղութե
գործակալներէն մէկը բռնուելու ըլլայ,
ուրիշներուն նման պատժուելէն ետքը
օրագրաց միջոցաւ ալ պիտի հրատա-
րակուի անոնց յանցանքը և պատժը:
Աստի ամեն մարդ խելքերին գլուխ
նին թող ժողովին, թաղաւորին հրա-
մանին դէմ գործի մէջ չի գտնուի,
որպէս զի թէ իրենք զերենք և թէ ժո-
ղովորդը խնայած ըլլան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԱԽԱ: Նախագահ իշխանը կը
շարունակէ իւր ձանապարհորդութիւնը
Գաղղիոյ հարաւային գաւառներուն
մէջ: Ինչոք անցած տեղերը ժողովուր-
դը կ'ընդունէ:

Սեպտեմբեր 7/19 ին Լ. ին
քաղաքը հասաւ ու հետեւեալ օրը
հին Նաբոլէոն կայսեր ձիաւոր արձա-
նը կանգնելու հանդէսին ներկայ գրա-
նուելով, հետեւեալ ատենաբանու-
թիւնը ըրաւ:

« Լիւնցիք,
« Զեր քաղաքը նշանաւոր անցքերով կայսեր կե-
նացը զանազան երեսցիւթեան մասնակց եղած է:
Դուք զանազան հիւպատոս ուղեւորներ, երբոր լեւե-
րէն անցնելով նորանոր յաղթութեան պարհներ քաղե-
լու կ'երթար: Դուք զանազան ամենազօր կայսեր ուղե-
ներէնք. և երբոր Եւրոպայի տեղութիւնները զանազան
կողմէն մը արտօնեցին, դուք գործեալ 1815 ին կայսր
ուղեւորներուն մէջ առաջիններէն եղաք:

« Նշանաւոր այսօրուան օրը ձեր քաղաքը առաջին
է, որ անոր արձանի կը կանգնէ: Այս բանը նշանակու-
թիւն ունի: Զիտուր արձանը միտակ թաղաւորող իւ-
րաններու կը կանգնուի. ուստի ինչմէ առաջ եկող
կառավարութիւնները այս պատուը չուղեցին ընել
այնպիսի իշխանութեան մը: Գուրբի օրինաւոր ըլլալը
չէին ուրիշ ընդունել: Այսու ամենայնիւ մը կայսր
չափ օրինաւոր իշխան եղած է Գաղղիոյ, որ երբ
անկամ ժողովուրդէն ընտրուեցաւ, պապէն օծուե-
ցաւ, և Եւրոպայի բոլոր ջամբարանի տեղութիւններ
ընէ ձանձնուեցաւ, որոնք անոր հետ քաղաքական և
ամուսնական կապեր հաստատուցին:

« Կայսրը երկու թշնամի դարերու միջնորդ մը և
զուր, հին դուրսութեան մեղացի մարդ մէջ եղած արեւ
բաները նորին հաստատուելով, յեղափոխութեան մեղացի
անոր արեւիքները ամեն տեղ յաղթող ընելով: Ահա
անոր համար զանազան կարգաւորները շատ շանցաւ. ի-
րենց յաղթութեան վրայ լայն: Իսկ զանազան պաշտ-
պանները, պէտք է յիշել, որոնք անոր կործանա-
նը վրայ լայն:

« Այս համար, երբոր ժողովուրդը աղտու ընտ-
րութիւն ընելու կարող եղաւ, աչքը Նաբոլէոնի ժա-
ռանգին վրայ դարձուց, և այն իրաւամբ փարիզէն
մինչեւ Լիւն ամեն անցած տեղերու փառամուտ « Լե-
շէ Խայր » աղաղակը լուսեցաւ: Բայց այս աղաղակ
կը իմ աչքին առաւել յիշատակ մըն է, որ պիտի կը
գրչի քան թէ յայտ մը, որ փառասիրութիւն կը գոչայնէ:

« Գաղղիոյ հաւատարմի ծառայ, ես մէկ նպա-
տակ մը կը նշանակեմ. այսինքն այսօր խառնու-
թիւններու և պատիւ յայտու երեսն տասն ու վըս-
եղած այս մեծ երկրին մէջ նորոգել անանկ խաղա-
ղութիւն մը, որուն հիմը ըլլայ մարդոց մէկու հետ
հաշտութիւնը: Իշխանութեան անընթեղ զորութիւնը,
բարոյականը, ժողովրդեան աշխատանք և տառապ-
եալ կարգերուն համար սերը և ազգային պատիւը:

« Մենք հիմա հարկաւ այն նեղ ժամանակին դուրս
եկանք, ուր ազգային և գեղնի գաղափարները մէկ մե-
կու հետ շփոթած ըլլալով, ամենեւին ազգի միտքը
աւրուեցան: Իսկ հիմա իշխան ու հայրենասիրութիւնը
կը պահանջեն, որ ամեն ժամանակներու մէջ աղբը
իր բաղդը չի որոշած աղէկ խորհի, և ինքի համար
զեւր, գիտար է գիտնալ, թէ ես ինչ անուամբ կը
նամ առնել մեծ ծառայութիւններ ընել աղբիս:

« Թէ որ Նաբոլէոնի համար անուանը կըսար դիւ-
րացին ինքի յանձնուած պաշտօնը, ուսկից ես չի կե-
ցայ. ես չեմ փախիրք անձնական օգտի համար: Այս
համար ամուսնը Խայր անուանին հետ փոխուեց:

« Ուրեմն գործինք այս վիժին վրայ մեր մեծա-
րանց նախընտր այս մեծ մարդուն յիշատակին. ասով
թէ Գաղղիոյ փառացը և թէ ժողովրդեան վեհանա-
նական երախտագիտութեանը պատիւ մը ըրած կը-
լանք: ասով դարձեալ կը հասկնուի լիւնցից հաւա-
տարութիւնը անանկ յիշատակներու: »

Այս ատենաբանութիւնը բխրաւ-
ւոր բաղնութեան առջեւ կ'ըլլար, ու
րոնք մտիկ ըրած ատենին ստեպ ծա-
փահարութեամբ և կեցի Խայր աղա-
ղակներով օգը կը թնդացնէին:

Սեպտեմբեր 14/26 ին՝ նախագահ
իշխանը Վարսիլիա հասաւ: Այն օրը
տեղաւորութիւնը ժողովային ըստած մե-
քենայ մը ձեռք ձգեց Վարսիլիայի մէջ,
որ նախագահը սպաննուելու պատրաս-
տուած էր: Այս մեքենան կը բաղկա-
նար 4 թնդանօթէ ու 250 հրացանէ,
որոնց մէջ 1500 գնտակ լեցուած էր:
Այս դաւադրութեան հեղինակները
բռնուեցան և իրենց ամեն ձիւղերը
յայտնուեցան: Արդէն քննութիւնն
սկսած է:

ԱՆԳՂԱԽԱ: Ուրիշներէն դուրսը
մեռած ժամանակը իւր յուզար-
կաւորութեան հոգը ազգին և թա-
գուհւոյն վրայ թողելով, Վ. Թագու-
հին ուղեց ամենամեծ հանդիսիւ յու-
ղարկաւորել հանգուցեալ մեծանուն
դուրսը, որ մեծ Նաբոլէոնէն ետեւ
դարուս ամենէն երեւելի մարդն էր:
Ինչոք իր այս դիտաւորութիւնը խոր-
հրդարանին հաճութեանը յանձնեց,
որպէս զի ազգն ալ մասնակց ըլլայ այս
մեծարանաց պարտաւորութեան կա-
տարուելուն: Աստի դուրսին յու-
ղարկաւորութիւնը խորհրդարանիւ-
րուն բացուելէն ետքը պիտի կատար-
ուի:

Մարտի 11. Պողոսի մայր եկեղեց-
ւոյն մէջ պիտի թաղուի հոգաւոր
Լ. Գրո Նաբոլէոնի քով, որ Նաբոլէոն ամե-
նէն ծովակալն էր:

Վ. Թագուհին դուրսին մահուան
լուրը առնելուն պէս իր բոլոր անովը
սուգի մէջ մտաւ մէկ շաբաթուան
համար:

Լ. Գրո Հերտինձ զօրապետը հան-
գուցեալ դուրսին տեղ ընդհանուր ըս-
պարտաւոր անուանեցաւ:

Ուրիշներէն դուրսին ուրիշ պաշ-
տօններն ալ զանազան երեւելի մար-
դոց տրուեցան:

ԱՆՍՏՐԻԱ: Ինչպէս եկած լու-
րերը մանրամասն նկարագրութիւններ
կ'ընեն այն տեղ այս միջոցին տեսնը-
ւած զինուորական ահարկու տեսարա-
նին վրայ: 50,000 զօրք ժողովուած են
հոն զինուորական հանգէսներու պատ-
ճառաւ: Յիշեալ քաղաքը կը գտնուի
նաեւ այս միջոցին Վատրիոյ Վ. Կայ-
սեր հետ Ռուսաց կայսրութեան
ժառանգ Լեքսանդր մեծ դուրսը,
Պատի հիմակուան իշխանը, Վ. Իւր-
թէմպերի ժառանգ իշխանը, Իւր-
մայի դուրսը, Սաքսոնիայի Ալբրիտ
իշխանը, Բոսնիայի դուրսը և ուրիշ
շատ երեւելի մարդիկ:

ԻՏԱԼԻԱ: Թուրքիայի դըստութե-
մէջ երկու հոգի Ֆրանչէսքո և Ռօզա
Սաւինի անուն հռովմէականութենէ
ի բողոքականութիւն դառնալով, պա-
պական կղերը ոտք ելին ու զանոնք
դատաւարութեամբ գլուխին գերծուած
եղեւեւաւորի հագուստով Մարեմայի
նաւարանը խրկեց և հին շղթայակալ
չարաչար աշխատեցաւ:

Այս կրօնական բռնութեան հա-
մար Նաբոլէոն կառավարութիւնը Թու-
քանայի դուրսին միջնորդութիւն ը-
նելու և այն խեղճերը ազատելու գի-
տաւորութիւն ունենալը արտաքին
գործոց պաշտօնատեսնէն գրուած և
Նաբոլէոն լրագիրներուն մէջ հրատա-
րակուած նամակէ մը կ'իմանամք:

Այս դեպքին վրայք Սօնիի արիւ-
րայն անգղիական լրագիրը հետեւեալ
լուրը կուտայ:

« Իերկրութեամբ արտի կը ծանու-
ցանք, որ Նաբոլէոն, Գաղղիոյ, Բը-
րուսիոյ, Զուրմայի և Զուրմայի
բողոքականներէն երեւելի մարդիկ կը
պատրաստուին պատգամաւորութե
Ռիօրէնցա երթալու ու Թուրքիայի
մեծ դուրսին աղաչելու, որ այն երկու
խեղճ դատաւարութեանը ազատու-
թիւն շնորհէ: Նաբոլէոնց կողմէն
գաղղիները երեք հոգի են, երկուքը
բէ- ըստած աղնուակալներէն, մէկն
ալ հասարակաց խորհրդարանին ան-
դամ:

« Մեր ընթերցողները ցաւելով
բայց առանց զարմանալու պիտի լսեն,
որ Թուրքիայի կղերական հաւանանց
զոհ եղող այս երկու դժբաղդները ի-
րենց բանտարկութեան և քաղած նե-
ղութիւններուն երեսնէն այն վիճակի
մէջ ինկած են, որ ողջ մնալին ինչք
չի կորեր: »

ԱՄԵՐԻԿԱ: Բուսպ կղերին մէջ
օգոստոս 20 ին սոսկալի դեանաշարժ
մը ըլլալով, Սանդիաի մեծ քաղաքը
գրեթէ ի հիմանց կործանեց է:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նշեալ երեքաբար Նախարարաց
ժողով եղաւ Ի. Գուրբ բարձրապա-
սիւ մեծ եպարքոսին նախագահու-
թեամբ:

Հետեւեալ օրը կրկին ժողով եղաւ
նոյնպէս բարձրապատիւ մեծ եպարքո-
սին նախագահութեամբ:

Նախկին գանձուց պաշտօնեայ (մա-
լիէ միւշերի) մեծսպասարի Նաբոլէոն
փաշան այս երկու ժողովներուն ալ
կանչուեցաւ:

Երեքաբար ի չորեքաբար օրերը
Գաղղիոյ դեսպան Լ. Կալապէր մարքիզ
Ի. մեծ եպարքոսին պարտը գնաց
Գուրբ Զէշմէ, և այս բարձրաստի-
ճան պաշտօնակալին հետ խորհրդակ-
ցեցաւ:

Հինգաբար օրն ալ դարձեալ Պ.
Լ. Կալապէր արտաքին գործոց պաշտ-
նէին տունը գնաց Գանդիա և նոյն
պէս խորհրդակցեցաւ:

Իր կարծուի, որ այս խորհուրդնե-
րն ու խօսակցութիւնները այս օրե-
րս կայսարական կառավարութեան եւ
քաղաւորութեամբ Վ. Պօլսոյ դրա-
մասեղանին Փարիզէն և Լ. յետադէն
առած 50 միլիոն ֆրանք փոխին վե-
րաբերեալ խեղիւններուն վրայ է, ու
րոնց պատճառաւ դժուարութիւններ
ծագած է կ'ըսեն:

Այս դժուարութիւններն ինչ որ են
նէ, կը յուսացուի, որ Ի. Գրոն իմա-
տութեամբ ու արգարասիրութեամբ
բը, տեղութեան շահուն և վաճառա-
կանութեան պիտոյիցը միասին օգ-
տակար ըլլալու կերպով յաջող վաճառ
մը կուենան:

Շաբաթ օրուան Բարձրագոյն դու-
ռը եղած ժողովին մէջ ալ այս ծանր
խնդրոյն վրայք խորհուրդ եղաւ:

Ուրիշները պէն կայսերական
կառավարութեան կողմէն պաշտօնիւ
Լ. Կալապէր խրկուելով, շաբաթ օրը
Ի. Գուրբ շոգենաւով ձամբայ ելաւ:

Յիշեալ շոգենաւին երթալուն
պատճառաւ, արքունի նաւարանը
Թուրքի Պաշի շոգենաւը տուաւ Օս-
մանեան ընկերութեան, որ անոր տե-
ղը բանեցին:

Շիշիլի խայրէ ընկերութիւնը
երկու շոգենաւ յատկացուց Վ. Պօլե-
սէն Իսկիւտար երթուելու հա-
մար: Այս շոգենաւները առտուանց
Իսկիւտարէն պիտի ելլեն ժամը
12:30, և 5 ին, կամուրջէն պիտի ել-
լեն ժամը 12:30, և 4 ին: Իրիկունը
Իսկիւտարէն ժամը 10 և 10:15 ին և
կամուրջէն ժամը 9:10, 11, և 11:15 ին:

Այս կարգադրութեան պատճառաւ
Օսմանեան ընկերութեան շոգենաւ-
նաւները, որոնք ասիէ առաջ այս եր-
թուելու ժամը կ'ընէին, ուրիշ տե-
ղի բանելու պիտի սկսին:

Նշեալ չորեքաբար կէս օրէն
ժամ մը ետքը Պէշեթաշի մէջ հրդեհ
պատահելով երեք մեծամեծ տուններ
հրդեհ արեւ եղան:

Պրուսիայէն կը գրեն սեպտեմբեր
24 թուով:

Նախագահ Նորմանտի կուսակալ մե-
ծապատիւ Խալիլ փաշան անցեալ եր-
կուաբար փառաւոր հանդէսով Պը-
րուսա մտաւ:

Այս աշխարհաշէն և իմաստուն
կուսակալին գալուստը բոլոր նահան-
գիս բնակչացը սիրող ուրախութեամբ
և քաղցր յոյսերով լեցուց: Բա-
րեկարգութիւն սիրող, արուեստից
և երկրագործութեան յառաջդիրտու-
թեանը պաշտպան, իմաստասար և ձե-

որնառն ընթացում, մեծապատիւ խաղի
փառային անունը ամենուրեք սիրելի եւ
ղած է: Այս մեծամեծ բարեմասնու
թեանց փորձերը արդէն քաղաքս ալ
սկսաւ տեսնել մէկ քանի աւուր մէջ:

Երեւոյն օրը՝ Երբն վսեմութիւն
ընկերակցութեամբ քննիչ (միւլթեթ-
թիւ) խմբի փառային՝ տեղւոյս ար-
քունի մետաքսի գործարանը գնաց, ուր
երկու ժամու չափ մանրամասն քննու-
թեամբ ամեն բան աչքէ անցունելով,
շատ գոհ եղաւ գործարանին տնօրէն
Սէֆէմէտ Լեֆէնտիէն՝ որ բանիբուն
և գործունեայ մարդ մը ըլլալով, միայն
իր բնատուր հանձարոյն օգնութեամբ
բը յիշեալ գործարանը եւրոպական
գործարաններուն կատարելութեան
աստիճանը հասուցած է:

Այս բարեկարգութեան հետ մե-
ծադարձ փառային տեսնելով նաև հոն
բանող 82 աղքատ աղջկանց կանոնա-
ւոր և փութալան աշխատութիւնը,
բարեհաճեցաւ ինչպէս գոհունակու-
թեան, ամեն մէկուն մէկ մէկ ընտիր
ֆիլապոյտոյս պատմ շնորհելու, որով այն
խեղճ աղջիկները ուրախութեամբ լեց-
ւած չէն դադարիր օրհնութիւն և
շնորհակալութիւն ընելէ Երբն բարե-
խնամ վսեմութեանը:

Տասն և հինգ տարիէ ի վեր Սայ-
տա գաւառին Գարա Ալի ըստած
բաժնին մէջ Ալի ճեմաճ անուն մե-
կը անդին ասդին իրեն պէս քանի
մը չարագործ ընկերներ գլուխը ժողո-
ւած Բերիայի (Շալէպ) և շամայի
կողմերը ճամբաները կտրելով, անցա-
ւորները կը կողպատէ և մինչեւ մար-
գասպանութիւն ալ կ'ընէ եղեր: Այս
բանը Սայտայի նախկին կառավարիչը
լսել և զանոնք ձեռք ձգելու շատ մի-
ջոյնք բանեցուցեր է ալ նէ մէկ կեր-
պով մը չէ յաջողեր, որովհետեւ յիշ-
եալ չարագործները վարենի գաղան-
ներու պէս իրենց սրբը անմատոյց ժաշ-
ուելու մէջ հաստատած են եղեր: Այս
կայն անցեալները Սիսիւքեան Գեորգ
աղային գերդաստանը այն կողմերէն
անցնելու ասան կողպատած և ձիափա-
րը (սիւրիւճիւ) սպաննած ըլլալովին
աղբու միջոցներ ձեռք առնուել և
վերջապէս այս օրերս Ալի ճեմաճ ա-
ւազակապետ բռնուել է:

Դամանակէ մը ի վեր Փարիզի
մէջ քանի մը չարագործ նոր տեսակ
գողութեան ընկերութիւն մը կազմեր
և իրենց ճարտարութիւնը հետեւեալ
կերպով ի գործ կը դնեն:

Երբեք հոգի խորհրդակցելով, ա-
ռաջ մէկը կ'երթայ խահուէտուն մը
կը նստի, խահուէ և օղի խմելու կ'ը-
բաղի. միւս ընկերը կէս ժամ ետքը
նոյն խահուէտունը կ'երթայ և առա-
ջինին անծանօթ ձեռնադրով զատ տեղ-
մը կը նստի: Ինկերն ասոր դարձ տե-
նելուն պէս՝ խմածին ստակը կը վճա-
րէ կ'երթայ: Այս քիչ մը նստելէն
ետեւ խահուէտան տիրոջը քովը մօտե-
նալով՝ « Ես հիմա այս տեղ քարպո-
վանց մը ձգեցի դուն ալ առիւր դրա-
մանտուկը նետեցիր, շուտով հանէ
տուր, որ քեզ չի խայտառակէմ » կ'ը-
սէ: Ինտանաբար դիմացինը նեղա-
նալով քարպովանցի ապացոյցներն ինչ
են, զորուց նայիմա՝ կը պատասխանէ:

— Իմ քարպովանցս այսինչ ձեւը այսինչ
նշանները ունի, մէկ քովս ալ ծակ է:
բանց գրամանտուկը ու հիմա յայտնի
կ'ըլլայ որ կ'ըսէ միւսը: Իրաւունքն սն-
տուկը կը բացուի, և կը տեսնան, որ
մարդուն զուգածներն ուղիղ են, կը
հանեն քարպովանցը կուտան, որ դուրս
կ'ըլլէ, ընկերը կը գտնայ և իրենց խա-
բէութիւնը ուրիշ տեղ ի գործ դնե-
լու կ'երթան:

— Այս օրերս Երբն մէջ Գ. Երբն
անուն մէկը մեռնելով, իւր հարստու-
թիւնը Վ. Թադեւոսեան թողուց: Ի
ըրաբիր մը այս մարդուն կենացն ու ըս-

տացունձոցը վրայ հետեւեալ տեղե-
կութիւնը կուտայ:

Գ. Երբն փաստաբան էր և 72
տարեկան մեռաւ: Երբեք քսան տարի
առաջօրը մեռած ժամանակը՝ 6,250,000
ֆրանքի (իւր 56,500 քսակ) հարստու-
թիւն ժառանգեց: Սակայն ինքը այն-
չափ ազա՛հ էր, որ բոլոր կենացը մէջ
պղնձ կոճակներով կապոյտ վերաբ-
կուէ մը զատ ուրիշ հագուստ չի հա-
գաւ, որուն բնաւ խողանակ (ֆրոյզ)
գարնել չէր տար վախճալով, որ չի մա-
շէ: Գ. Երբն անանկ կ'ծծի սովորու-
թիւններ ունէր, որ իր բնական գաւա-
ռին մէջ ամենուրեք բերանը առակ ե-
ղած էր: Երբեք միւս չի շնորհած՝ օր
մը իր հոգեքը աչքէ անցունելու ելեր
էր: Կատքը Դարնիկէմ հասած ժա-
մանակը, բոլոր ճանապարհորդները
կտրէին իրան ու հոն պանդոկ մը
տան ծառելու. մինակ Գ. Երբն ներս
չի մտաւ: Իր ճամբու ընկերները այս
տեսնելով կարծեցին, որ ասակ չունէր
իր ուտելը վճարելու, և մէջերին
հանգանակելով ինչի՞նչ գաւաթ մը օ-
ղի խմցուցին, զորն որ մեծ շնորհակա-
լութեամբ ընդունեց: Անունէն քա-
նի մը օր առաջ Գ. Երբն կտակ մը գը-
րեց, որուն մէջ քանի մը մանր մունր
գումարներ իր ազգականներուն որո-
շելէն ետեւ, իւր հարստութեան գըլ-
խաւոր մասը թագուհւոյն թողուց: Ա-
նեցած հարստուէ գումարը 12,500,000
ֆրանքի (112,500 քսակ) կը հանեն:
Քանի մը տարիէ ի վեր Գ. Երբն հա-
ղւա իւր անհրաժարելի պէտքերը կը
հոգար, և իւր մէկ հատիկ ծառան,
որ 26 տարիէ ի վեր իր քովն էր, ա-
ռանց սպրուստի ողորմելի վիճակի մը
մէջ թողուց:

ԲԱՆՈՒԹԵԱՆ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ ՄԸ

Երբային մատենագրութիւնը այս
օրերս նոր հարստութիւն մըն ալ եւեւ
ցուց: Այնչեւ հիմա կը թուութեան և
գաստարակութեան վրայ ազգերուս
մէջ քիչ շատ խօսողներ ու գրողներ տես-
նուեցան, բայց գրեթէ ամենն ալ իւ-
րեւ ներկայ սերունդէն անցած իրենց
աչքը նորահաս և ապագայ սերունդ-
ներուն վրայ դարձուցեր էին. անոնց
կանոնաւոր գաստարակութեանը վը-
րայ միայն հիմներ էին ազգերուս ըս-
տաւորութիւնը, քաղաքակրթութիւ-
նը և ուրիշ ապագայ օգուտները:

Չափահաս մասը՝ որ այս օրուան
օրս ազգերուս ըստութիւնը կը ներ-
կայացնէ, հիմաուրց ծառերու
պէս, իրենք իրենցմէ պտուղ բե-
րելու անբաւական՝ միայն իրենց ար-
մատէն ծրած բողբոջները պաշտպանե-
լու, խնամելու և պողբեր ընելու
պարտաւորուած էին: Այս պարտաւո-
րութիւնը թէպէտ ըստ ինքեան ար-
դար և աննահանջելի է, այսու ամե-
նայնիւ մէկուն միտքէն չէր անցնէր՝
չափահասներուն ալ հոգ տանիլ, կրթ-
ութեան քաղցր ճաշակը անոնց մէջ
մտցունել և մտաց լուսաւորութեան
բարեքներուն անոնք ալ մասնակից ը-
նել համարելով, ճամբայ ցուցնելով,
առաջնորդելով և դուրին պարզ ու
յարմար եղանակներ և միջոցներ ա-
նոց առջեւ դնելով: Այս պակասը
ընկերու պարծանքը արժանապարզ Օգ-
րայեան Երբնուս աղային պահուած էր
որ « ընթերցասիրութիւն կամ գիրք
կարդալու միջոցաւ մտաւորական մը-
շակութեան հասնելու օգտակար խը-
րատներ » անունով, իր բեղմնաւոր
մտաց և ճարտար գրչին մէկ նոր բայ
ընտիր պտուղը ազգերուս կը նուիրէ:

Այս գիրքը մեզ արդէն ծայրէ ի
ծայր կարգացած ըլլալով, անոր ամեն
կերպով կատարելութեանը, գեղեց-

կութեանը և մանաւանդ օգտակարու-
թեանը մասին մեր զգացած բերկրու-
թիւնը աւելորդ կը համարենք զրու-
ցեմեր արդէ ընթերցողներուն, որով
հետեւ մատենագրին սիրելի անունը
և արդէն ազգերուս մէջ ունեցած
արժանի համբաւը առանց մեր գովես-
տին կարօտ ըլլալու՝ մեծ երաշխաւո-
րութիւն մըն են կործոյն աղնուէր
ընդհանուր ազգին առջեւ, և բաւա-
կան կը համարենք միայն այս պատ-
ւական գրքին ամեն մէկ գլուխներուն
ցանկը հոս դնել:

Գլուխ Ա. Մտաւորական մշակու-
թեան հարկաւորութիւնը:

Գլուխ Բ. Մտաւորական մշակու-
թեան գրամական օգուտը:

Գլուխ Գ. Չբաւորութիւնն ու
զբաւմունքը չեն կրնար երբեք արգելք
ըլլալ միտքը մշակել ու զոյգել:

Գլուխ Դ. Այն որչափ շատ զբաղ-
մունք ունենայ, չի կրնար իր միտքը մը-
շակելու ժամանակ չի գտնալ:

Գլուխ Ե. Մտաւորական մշակու-
թեան հասնելու գլխաւոր միջոցները
որոնք են:

- Ա. Դիպրոպիւն:
- Բ. Խօսակցութիւն:
- Գ. Ունիքրոպիւն:
- Դ. Բնութիւն:
- Ե. Բնութիւն:

Գլուխ Զ. Բնութիւնը մեր ընդ-
հանուր օգուտները իւր կարողութիւն,
իւր զարգ և իւր զուարճութիւն:

- Ա. Բնութիւնը օգուտը իւր կարողութիւն:
- Բ. Բնութիւնը օգուտը իւր շարք:
- Գ. Բնութիւնը օգուտը իւր զուարճու-
թիւն:

Գլուխ Է. Բնութիւնը մեր օգուտնե-
րուն շարունակութիւնը և մտաւորա-
կան մշակութեան չորս գլխաւոր մի-
ջոցներուն բաղադատութիւնը:

Գլուխ Ը. Ուսման ընթացքին մէջ
կարգաւոր նիւթերուն կարգին և առ-
հասարակ գրոց բնարութեանը վրայօր:

Գլուխ Թ. Մարդուս մարմին վրայ
ուսման կամ ընթերցման նիւթերուն
մասնաւոր ազդեցութիւնը:

- Ա. Լեզուի լեզու:
- Բ. Լեզուագիտութիւն:
- Գ. Չափաբերութիւն:
- Դ. Տօնաբերութիւն:
- Ե. Տօնաբերութիւն:
- Զ. Լեզուագիտութիւն:
- Է. Պարագիտութիւն:
- Ը. Ստանաւոր վարչութիւն:
- Թ. Բնական պարագիտութիւն:
- Ժ. Բարոյական խմբագրութիւն:
- ԺԱ. Բարոյական պարագիտութիւն:
- ԺԲ. Բնականագիտութիւն:
- ԺԳ. Լեզուագիտութիւն:
- ԺԴ. Լեզուագիտութիւն:

Գլուխ ԺԵ. Բնութիւնը մը շահաւոր
ընելու քանի մը հնարքներ:

- Ա. Ուսման լեզու:
- Բ. Գրագիտութիւն:
- Գ. Յիշողութիւն:
- Դ. Ստանաւորութիւն:

Գլուխ ԺԶ. Հասարակաց մէջ ըն-
թերցասիրութիւնը տարածելու քանի
մը գլխաւոր հնարքներուն վրայ:

Ա. Գիրքերը՝ կարգաւորութեան հարկին պէ-
նից և անորման յարմարութիւն:

- Բ. Գրքի փառք:
- Գ. Հասարակաց գրքագրութեանը համար
հասարակութեան ծախսարարները:
- Դ. Լեզուագիտութիւն:
- Ե. Թանգարան վերջաւորութիւն:
- Զ. Ստանաւորութեան զբաղմունք:

Այս ցանկը ինքնին անհրաժեշտ վը-
կայութիւն մըն է նիւթային կարեւո-
րութեանը և օգտակարութեանը: Իսկ
թէ արդեօք հեղինակը իւր գովելինը
պատակին հասած է թէ ոչ, անտարա-
կոյս ենք, որ բարեւեր և ուղիւ ըն-
թերցողները մեր ըրած գատարութիւ-
նը լիովին կ'արգարացնեն երբոր մեզի
պէս գիրքը ծայրէ ի ծայր կարգաւոր
ըլլան:

Այս ամի հետեւեալ ուղերձը մեր

ըսածին ճշմարտութիւնը հաստատե-
լու բացայայտ վկայութիւն մըն է, ու
ընն որ մայրաքաղաքիս նորահաստա-
սութեանը Բնութեանը կողմ
մող ուսումնասիր երկտասարդաց կողմ
մէն ընծայուած է բաղմահմուտ աղ-
գասէր մատենագրին:

« Երբոր շատերը իրենց ապերախո-
տ գրչին հայ ցաւած սիրտը ետեւէ
նետեւ անգարմանելի խոցերով վիրա-
ւորելու սուրեր կը պատրաստեն,
երբոր ինքզինքնին իրենք բարեբար
պարծող ու խեղճ հայ աղքա, որ
միշտ իրեն բարեբարողներուն հազա-
ր ըստաւորը հասուցած է, ամեն
տեղ ապերախոյցութեանը աշխատող
մշակներ՝ իրենց տընտեմը յաւիտե-
ւոր զինք, և իրենց անուանը յաւիտե-
ւոր նական նախապէս՝ Հայաստանի բը-
նական սիրուն ծաղիկները կարելու
մանգաղներ երեւան կը հանեն, դուն
սիւ իմ ու ամենասիրելի աղքա պար-
ծանք, դուն միայն ազգերուս ճըլ-
մարիտ օգուտը բեղնապատակ դրած,
անոր հասնելու միջոցները կը գիւրեւ-
ն դուն, աս շիւթութեանց մէջ՝ իւր
րեւ պտակ առաքնութեան, աղբա-
ւոր յայտաւոր զեղը բռնած՝ զանի-
կա լուսաւորութեան և քաղաքակր-
թութեան ծոցը ուղիղ և կարճ ճամ-
բով կ'առաջնորդես:

« Բու տաղանդաւոր մտացդ ամե-
ւոր նազեղեցիկ մէկ նոր պտուղն ալ այս
օրերս վայելել տուիր հայ աղքին,
այն է որ ընթերցասիրութիւնն որ կոչ-
ւած ընտիր և օգտակար գիրքը, ու
րոյնմէ հինգ օրինակ ընծայելով կը
պատուէս Բնութեանը ինքեանը
թիւնը, որուն յաջորդելը բու պան-
ծալը և խմատուն ձեռնադրութիւն
նըղ նուիրած ես, և ով գիտէ դեռ
քանի ասանկ ամենազեղեցիկ պը-
տուղներդ պիտի վայելէ աղքին հետ
մեր երախտագէտ ընկերութիւնը:
Եւսնցմա՛ գաւն քու անուագ անուա-
հացնելու յաւերժական արձան՝ մը կը
տընկես, նախանձելի պտակ մը քեզի
կը յօրինես, դուն, կ'ըսես, վասն զի
չունինք քեզի պէս բարեգէտները
վարձաւորող ընկերութիւն մը:

« Իայն՝ թող սերը՝ միաբանութեց
կապը՝ մեզին չի հեռանայ և ժամանա-
կը կը պսակէ մեր յոյսերը՝ ուսումնա-
սիրական աղնի բաղձանքներն իւրա-
ւոր ջրնելով: »

ԾԱՆՈԹՅՈՒՆԻՐ

Ինչ՞ Զեյնէի Խոյն Թօքաղը սօգաղը
ըսած ինչոյն բերանը զիսկ ճամբուն վրայ
ծախոս գտն մը իւր: Երբոր Խոյնէն (Գալի)
է: Ալ Երբ Խոյնէնին մէջ ունի ինչոս անեալի,
սրահ մը: Իսկ վարչին մէջ նոյնպէս երկուսն
եալի, սրահ մը: Իսկ մայրիկ Խոյնէն զի-
ւած է, ունի նաեւ մասն (Խիւր) մը, խո-
հարան (մոլայագ) մը, երկուսն հոր և պան
մը պէս էլ զիսկ ուրիշ ամեն բաները:

Օրոն Գալիոսի նոր զինուած պարզ-
պէն Գալի Խոյնէն կարելով երբոր քեզեւտե-
ճիլ խանութը ծախոս է 400 խանութն խորո-
թիւն և 6 խանութն երես ունի, երկուսն Գալի-
ոսի մէջ Խոյնէնին կ'ըլլեն, մեկը ծոլեղ-
նէն. զինք նոր է:

Ալ Երբեք Խոյնէն և Խոյնէնին վրայօր
խոյն ուղղող խոյնէնայ Ալ Խոյնէն Խոյնէն
Խոյնէնին 3 ինչ անեալի (Թեթեան Ալմիս
աղային կէս պէսնոսի):

ԽՄԲԱՏԻՐ — ՏՆՕՐԵՆ

Գ. Ս. ԻԹԻԹԻՃԵԱՆ: